Միսաք Մեծարենց

Հովին անցքը

Անդնդագալար օվկիանի պես
կ’ուռի այս գիշեր հովն ալիք ալիք,
կը ծըծեմ լեղի սարսափն իր ճամբուն…
իր լալոնին մեջ սենյակս է ծըփո՛ւն,
հոգիս՝ իր ահեղ կոչին խաղալիք՝
մինչ լույս շավիղ մը կ’երկարի մտքես…:

Լեռներեն կ’իջնե հևքն իր մոլեկան,
իրար բերելով ձեռքերս՝ անձկագին
մինչ ես ծնրադիր՝ կ’ունկնդրեմ երգի՛ն,
երգին խոլարձակ, երգին թախծագին…
ե՞րբ պիտի հասնի իր հանգըրվանին
արհավրոտ Ուխտին այս գոռ կարավան…:

Բուռն համեմունքով իր շունչն է լեցուն.
ու կ’առնե ծովուն բույներն աղտաղտուկ՝
մինչ զայն կը տանին պայերն ամբարձիկ,
համբույրն իր կուգա մինչև իմ խցիկ.
և ես հըպումեն կը փախչիմ գաղտուկ,
հըպումեն՝ վայրի վիշտով ակաղձուն:

Մարած է քրքում լույսը լամպարիս,
հորդող մութին մեջ հևալեն տրտում.

ես դեռ կըսպասեմ ալեկոծ Անցքի՛ն,
նայվածքըս լեցուն իղձով կաթոգին,
ա՛հ, քու՛կդ եմ արդեն, ո՛վ միստիք ցնցում,
ո՛վ ձայն, մինչ ուժգին հոգվույս կը փարիս…